№ 179 ՇԱԲԱԹ, 15 ՕԳՈՍՏՈՍԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 15 ՕԳՈՍՏՈՍԻ № 179

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների ընդհանրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Օգոստոսի 9-ին, գիշերվայ ժամը 2-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց

Բաղդասար (Ղազո) Քրիստափորեան
ՆԱՐԹԻԿԵԱՆՑ,

որի մասին խորին վշտով յայտնում են աղգականներին, բարեկամներին և ծանօթներին՝ հանգուցեալի կինը՝ Վարվառէ Գեորգիէվնա, որդին՝ Խաչատուր Բաղդասարեան, հարսը՝ Աննա Տատոյենցա Նալբիկեանցները և հանգուցեալի տներ՝ ձագ Կոնս Գէորգեան Բայրամեանցը։ Ամբիծքն այսօր, երեկոյեան ժամը 7-ին, հանգուցեալի բնակարանում (Угольная ул. № 12, IV քաղ.)։ Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, կիրակի, օգոստոսի 16-ին, առաւօտեան ժամը 10-ին բնակարանից դէպի Մաղնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։

ՕԳՆԵՑԷՔ ՈՐԲԵՐԻՆ

Օգնեցէ՛ք փրկելու քաղաքական խառնակութիւնների անհեղ զոհերին, որոնք քաղցից, հիւանդութիւններից կոտորվում են անօգնականաբար։ Օգնեցէք պահպանելու այն բեկորները, որոնք Հայաստանի ապագայ երկրագործներն ու աշխատաւորներն են լինելու։

Նպաստամատոյց Ընկերութիւնը որոշել է բանալ օրքանոց մինչև 300 որբերի համար, մատակարարելով նրանց բնակարան, մնուդ, զգեստ և այլ ամեն պիտոյքներ և հոգալով նրանց թէ մտաւոր և թէ գործնական կրթութեան մասին։ Ամեն մի օրբի մնուցդը և խնամքը կարժենայ տարեկան մօտաւորապէս 100 ր.։ Նպաստամատոյց Ընկերութիւնը կոչ է անում հասարակութեան՝ օգնել օրքանոցի պահպանութեան, յանձն առնելով, ըստ կարողութեան, մի կամ մի քանի օրբի տարեկան պահպանութեան ծախսը։ Աւելի փոքր գումարներ ևս ամենայն շնորհակալութեամբ կընդունվեն։

Նուէրները խնդրվում է ուղարկել «Մշակի» խմբագրութեան՝ Նպաստամատոյց Ընկերութեան հասցնելու համար։

առ. 545. 5—1

ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻ ԿՕՄԻՏԷԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

բաց է առ այժմ երեքշաբթի և շաբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 11-ից մինչև 1-ը և երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը. Хлѣбная площадь Норашенскій пер. д. № 6, второй подъѣздъ.

առ. 541. 2—1

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

Ֆելդշերներ, ֆելդշերուհիներ եւ գրուբեան քոյրեր

Համառօտասական Քաղաքների Միութեան բացած մենդատու կայանների համար՝ փախստականներին խնամելու։ Ցանկացողները պէտք է դիմեն պ. Ս. Ս. Յարութիւնեանին Դիլիջան կամ Թիֆլիսում Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութեան—Абасъ-Абадская пл. № 7.

առ. 544. 2—1

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ.Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱՎՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՆՆԵՐՈՎ, արհեստական ՆԵՊԼՈՅՈՑՈՐԱԿՈՎԸ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների ընդունելութիւնը և լուսանկարները լուսաւորված ՊՐՆՑԻՊԻՆՆԵՆ ՁԱՆՕՒՑԻՆ ՁԱՆԱԿԱՑԹԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցերեկ. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀՔԱՒՈՐՆԵՐԻ 9—10 ժամ. 2Բ։ Бебутовская, 23. тел. 7-29.

առ. (ա. օ.) 504. 100—15

ԻՏԱԼԻԱՆ ԵՒ ԹԻՒՐՔԻԱՆ

Իտալիան ևս պատերազմ յայտարարեց Թիւրքիային։

Իտալիայի այս քայլը կարող է ստիպել Բոլգարիային և Յունաստանին, հետևաբար նաև Ռումինիային, նոյնպէս ակտիվ միջամտութիւն գործել ներկայ համաշխարհային պատերազմին։

Իտալիան պաշտօնապէս մինչև այժմ պատերազմ էր յայտարարել միայն Աւստրիային. նա պատերազմի մէջ չէ Գերմանիայի հետ, թէև Գերմանիան իր դիպլոմատիական ներկայացուցիչներին ետ է տարել Իտալիայից։

Գերմանիան ինքը պատերազմ չը յայտարարելով Իտալիային՝ ամեն կերպ աշխատում էր, որ Իտալիան Թիւրքիայի վերաբերմամբ չեզոք մնայ, որովհետև եթէ Իտալիան միանայ Ֆրանսիային, Անգլիային և Ռուսաստանին և իր նաւատորմը, որ այժմ անգործ է, ուղարկէ Դարդանէլ, պարզ է, որ նրա հանդէս գալը կարող է ահագին և վճռական նշանակութիւն ունենալ։ Եւ չէ՞ որ Իտալիան արհամարհելի ծովային ոյժ չէ։

Միւս կողմից, ինչպէս յայտնի է, Տրիպոլիտանի պատերազմի ժամանակ Իտալիան գրաւեց Եգէյեան ծովի այն կղզիները, որոնք պատկանում էին Թիւրքիային և որոնց վրա վաղուց աչք ունի Յունաստանը։ Այդ գրաւումը ժամանակաւոր էր, բայց այժմ, երբ Իտալիան պատերազմ յայտարարեց Թիւրքիային, նա կարող է վերջնականապէս գրաւել այդ կղզիները։ Դրանով Յունաստանի տենչանքը կարող է ջուրն ընկնել և միակ ելքը՝ այդ կղզիները ստանալու ելքը այն կը լինի, որ Յունաստանը յարէ քառեակ դաշնակցութեան, որպէսզի պատերազմից յետոյ նա իրաւունք վաստակէ՝ երբև վարձատրութիւն ստանալ այդ կղզիները։

Բայց միւս կողմից, Յունաստանը, որպէսզի կարողանայ քառեակ համաձայնութիւնից ձեռք բերել Եգէյեան կղզիները, պէտք է ընդունէ նրա առաջարկը՝ զինել Կավալան Բոլգարիային, որպէսզի սա ևս կարողանայ միանալ քառեակ համաձայնութեան։

Յայտնի է, որ Բոլգարիան, որպէսզի հանդէս գայ ընդդէմ Թիւրքիայի, պահանջում է, որ տան իրան Մակեդոնիան, որ Սերբիան գրաւել է, և Կավալան, որ Յունաստանը գրաւել է։ Սերբիան, ինչպէս կարելի է յուսալ, տուել է իր համաձայնութիւնը, բայց Յունաստանը յամառում է։ Դաշնակիցները դրա փոխարէն խոստանում են ընդարձակել մեր գրաւած շրջանը։ Աւստրալիական և նոր-զելանդական կորպուսների յարձակումները ուղղված էին Սարը-Բայրքի կատարի և Չունիկի լեռնակատարի դէմ և հարկադրվեցին նահանջել ստորոտի դիրքերը։ Յարձակումները Սուվլէում կանգնեցվեցին նրանից յետոյ, երբ մեր զօրքերը առաջացել էին 2½ մղոն։ Այսպէս մեր գրաւած տեղը հնարաւորութիւն

որոնց դէմ պէտք է կուէր քառեակ համաձայնութիւնը, որ Բոլգարիայի հողերը աւելացնի Մակեդոնիայում, ամենամեծը հարմարվում էր Սերբիայի մերժումը։ Այժմ քառեակ համաձայնութեան ծրագիրը խոստումներից անցնում է ըստ հողի վրա, և մնում է, որ բոլգարական կառավարութիւնը ասի իր խօսքը, որը հնարաւորութիւն կը տայ համաձայնութեան շարունակել ընդհանուր գործը։ «Ժուրնալը» կարծում է, որ սկզբունքային որոշումը բարենպաստ արձագանք կը գտնի Աթէնքում և Բուխարեստում։

ՍՏՈԿՀՈԼՄ.—«Ֆոլվարտսը» հաստատում որ Վոլֆի գործակալութիւնն աղաւաղում է փաստերը՝ չէզոք երկիրները շփոթութեան մէջ ձգելու համար։ Այդպէս, տալով գերմանական սոցիալիստների ճառերը, Վոլֆի Գործակալութիւնը բաց է թողել սոցիալիստների բողոքը ընդդէմ նուաճողական քաղաքականութեան։ Ճառերի մէջ իսկապէս ասվել է, որ օտար ժողովուրդների շրջանները նուաճելը խախտում է իրաւունքը։

ՍՏՈԿՀՈԼՄ.—Գերմանական շտաբը հաստատում է, որ «Մոլտկէ» յածանաւը վնասուածքներ է ստացել Ռիգայի ծովածոցում, նրա վրա բաց թողած ականից, որից յետոյ դնացել է Կիլի նեղուցը։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Թշնամու դէմ ցոյց տուած քաջութեան համար 3-ը աստիճանի սուրբ Գէորգի շքանշան է շնորհվել Կովկասի զորքերի հրամանատար ինֆանտերիայի գեներալ Նիկոլայի Իւդենիչին։

ԼՕՆԴՕՆ.—«Թայմսին» հեռագրում են Բուխարեստից, որ զանազան կողմերից լուրեր են գալիս, թէ աւստրո-գերմանական զորքերը կենտրոնանում են Դունայի հիւսիսային ափին և պատրաստվում են նոր յարձակում գործել Սերբիայի հիւսիս արևելքի վրա, ըստ որում հաւանական է համարվում, որ աւստրո-գերմանական զորքը շարժվելու է Բոլգարիայով՝ Վիդին-Բէլոգրադչիկ-Սոֆիա ճանապարհով։ Բոլգարիային հաղորդված է, որ նրան հնարաւորութիւն է տրվում վրէժ առնել Սերբիայից 1913 թ. պարտութեան համար, եթէ նա համաձայնութիւն տայ գերմանական ծրագրին։ Հակառակ դէպքում նրան սպառում է ճակատագիրը (ՃՄ)։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
14 օգոստոսի

ԹԻՖԼԻՍ.—Լօրիստանում տեղական աւազակախմբերը խիստ շարժում են սկսել ժանդարմերիայի դէմ, օգտվելով ընդհանուր անիշխանութիւնից, որ առաջացել է մեր թշնամիների ագիտացիայով և վրիժառու լինելու ժանդարմներից՝ նրանց անցեալ տարի ցոյց տուած եռանդուն ջանքերի համար Լօրիստանի անհանդիստ տարրերը ճնշելու գործում։

ԱՅԼ ԿԻ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
14 օգոստոսի

ԺԻՏՕՄԻՐ.—Նահանգապետը հրամանագրել է յարգելիս գրաւել Զինգէրի կոմպ. բամբակի և եկեղեցական նեկայացուցչութեան հետ։ Կարելի է առանց երկիւղի ասել, որ այսօր հայ հարաւսան աւելի լուսաւորչական համայնքի անդամ է, քան թէ ազգի։ Զենք ասում սրանով, թէ նա հաւատացեալ է, բայց նա պարտաւորված է մի եկեղեցու անդամ լինելու։ Հետևելով նախնիքների շաւղին՝ նա ընտրել է հայ եկեղեցու հովանաւորութիւնը, մի եկեղեցու, որը խստապահանջ չէ իր անդամի նկատմամբ, դժուարութիւններ չէ յարուցանում նրա դէմ և այլն։ Այդպիսով անուանական կապ պահպանելով ազգութեան հետ՝ հայ հարաւսանը թողնում է, որ իր արարքների հետևանքը ծանրանայ հայ ժողովրդի շլինքին։ Պարզ արտայայտվելով, պիտի ասենք, որ նիւթական բարիքներ ժողովելու գործի մէջ հայ հարաւսանը մրցութեան մէջ է մրցանում օտարների հետ և իր գործելակերպով գրգռում այդ օտարներին ոչ միայն իրա, հայ հարաւսանների խմբակցութեան, այլ ամբողջ հայութեան դէմ։ Եւ դուրս է գալիս, որ քաղցրութիւնը վայելում է հարաւսանը, թայնը ըմպում հայ ժողովուրդը։ Գոնէ այս հանգամանքը պիտի սարսափէր հայ բուրժուազիային՝ երախտապարտ լինել հայ ժողովրդին, բայց, ինչպէս ասացինք, դա գոյութիւն չունի իրականութեան մէջ։

Ամեն ազգութեան մէջ առաջնակարգ դասակարգը իր մտածողութեան և վարմունքի դրոշն է դնում մնացած խոնարհ դասակարգերի վրա, և վիթխարի ջանքեր են հարկաւորվում վերջիններիս համար, մինչև որ նրանք ազատվում են իրանց էութեանը խորթ դաղափարականութիւնից, ճանաչում են սեփական օյժն ու նշանակութիւնը և սկսում են դարբնել իրանց քաղաքականութիւնը։ Մեր մէջ առաջնակարգ դասակարգը հայ խոշոր բուրժուազիան է, որը ինքը խորշում է հայութիւնից, բայց չը նայած դրան՝ իր եաթից քարշ է տալիս հայութեան մի խոշոր զանգուած, մեր մանր բուրժուազիային, քաղաքի արհեստաւոր և մանր առևտրական դասին։ Հայ խոշոր բուրժուազիան հայ գիրք ու մտաւոր չէ կարդում, չէ ստանում, հայ մանր բուրժուազիան նրան ընդօրինակում է։ Հայ խոշոր բուրժուազիան իր զաւակներին հայ դպրոց չէ ձեցին խզել Բրեստ-Կովէլ գիծը։ Գերմանացիների կորստաբերը ահագին է։ Բրեստ-Լիտովսկը դատարկվել է։ Խանութները փակ են, հիմնարկութիւնները տեղափոխված են։ Վիլնան նոյնպէս դատարկված է։ Միլիցիայի պետ է նշանակվել տպարանատէր Զավադսկին։

◆ Միտավա է այցելել արքայազն Իսխիմը։

◆ Գերմանական սոցիալիստները պահանջում են հաշտութիւն, որով Էլզասը և Լեհաստանը պէտք է թողնվեն Գերմանիային, պէտք է ընդարձակվեն գաղութները։ Նրանք հակառակ են Դարդանէլը միջազգային յայտարարելուց։

◆ «Բ. Ե.»-ն հաղորդում է. «Եթէ պարզվի, որ «Արաբիկը» խորտակված է առանց նախազգուշացման, Վիլսոնը կը խզէ դիւանագիտական յարաբերութիւնները Գերմանիայի հետ»։

◆ Վիլսոնի քարտուղարը Վաշինգտոնում ճառ է արտասանել և յայտնել է, որ Գերմանիայի հետ միջադէպը շատ մօտ է։ Ի նկատի ունենալով, որ քարտուղարը անպայման ներշնչված է նախագահից, նրա յայտարարութիւնը ուժեղ տպաւորութիւն է ունեցել ամբողջ Ամերիկայում։

◆ Բերլինի մամուլը ասում է, թէ Իտալիան պատերազմ յայտարարելով Թուրքիային ենթարկվել է դաշնակիցների ճնշմանը, որպէսզի Դարդանէլի պաշարման իր մասնակցութեամբ հնարաւորութիւն տայ Ռուսաստանին ձմերային արշաւանքի պատրաստվելու։

◆ Սկսել են Դվինսկի հիմնարկութիւնների տեղափոխութիւնները։ Եկեղեցական հիմնարկութիւնները փոխադրված են Վիտեբսկ։

◆ Ռիգայի ծովածոցում ռուսաց նաւատորմի տարած յաղթութիւնը Պետրոգրադում ցնծութիւն է առաջացրել։ Պետ. Դումայում, Նէվսկի պրոսպէկտում և այլուր ցոյցեր են եղել։

◆ Աւստրիացիները Բոսնիայում կենտրոնացրել են չորս դիվիզիա. այնտեղ է եկել և գերմանական 8 դիվիզիա. Սերբիայի Ջնջիլը կը սկսվի այս օրերս։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈԳՈՒՏ ՀԱՑ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ստացանք 1) Թիֆլիսում, լուսանկարիչ Սիրատանից, յանձնելի Նպաստամ. Ընկ. 10 ր., 2) Թիֆլիսում, Աղաբէկ Ցովսէփանի միջոցով հանգանակված իր ընկերների շրջանում՝ 103 ր. (ցուցակը կը տպվի), 3) Թիֆլիսում, Գայիանէ Ղոլմանեանից, 25 ր., 4) Բալախանիից, Գրձելեանից, յանձնելի Նպաստամ. Ընկ. 10 ր., 5) Թիֆլիսում, № 37 լազարէթի ծառայողներից՝ 32 ր. 80 կ. (ցուցակը կը տպվի), 6) Պեատիգորսկից, Սարգիսովի վերաբնակիչ Ղազարոս Տէր-Խաչատրեանից 50 ր., 7) Թիֆլիսում, I առնտրական դպրոցի աշակերտ Սուրիկ Մանուէլեանից 2 ր. 90 կ., 8) Նոր-Նախիջևանից, Ալէքսանդր Աբէլեանից, Վեհ. Կաթողիկոսին ուղարկելի 50 ր., 9) Հին-Նախիջևանից, եղբ. Կ., Ս. և Լ. Ալէքսանեանցներից, յանձնելի Նպաստամ. Ընկ. 100 ր., 10) Կիսլովոդսկից, Գարեգին Մելիք-Մարութեանից 500 ր., 11) Ասխարադից, Զօրաբաբէլ Գրիգորեանից, իր մօր յիշատակին, 200 ր., 12) Ղզլ-Արվատից, Ղումաշ և Զառի Ցակոբջանեաններից 10 ր. յանձնելի Էջմ. Կենտրոն. Ցանձնաժողովին, 13) Երևանից, Ցովհ. Սարգսեանից, իր երեխայի ծննդեան առիթով 10 ր., 14) Իւրիէվկի զավոդից, Ա. Գէորգեանի միջոցով, տեղում հանգանակված 115 ր. 10 կ. գումարի կէսը 57 ր. 55 կ., 15) Ղզլարից, Զաք. Ա. Նարիմանեանից, յանձնելի Նպաստամ. Ընկ. 25 ր., 16) Բաքուից, տ. Ա. Ղ.-ից, յանձնելի Նպաստամ. Ընկ. 100 ր., 17) Թիֆլիսում, Սահակ տ. Ք. Սահակեանից 10 ր., 18) Նոր-Բուխարայից, Ա. Շահնազարեանի միջոցով, տեղական գաղութից հանգանակված 59 ր. (ցուցակը կը տպվի), 19) Ներքին-Ախտայից, Արշաւիր, Արտաւազդ և Միհրան Կարապետեանների միջոցով հաւաքված 15 ր., 20) Թիֆլիսում, Անտոն Ղարաքէշեանի միջոցով հաւաքված իր մօր՝ հանգուցեալ Մարիամ Ղարաքէշեանի թաղման ճաշկերոյթի ժամանակ 30 ր.։ Գումարն է 1399 ր. 25 կ.։ Նախկին ստացած 40,627 ր. 9 կ. գումարի (տես «Մշակ» № 167) հետ ստացել ենք ընդամենը 42,026 ր. 34 կ.։

ՑՈԳՈՒՏ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք 1) Սմարղանդից, տ. Սիրանոյշ Գուլումճեանից 5 ր., 2) Թիֆլիսում, № 37 լազարէթի ծառայողներից—32 ր. 80 կ., (ցուցակը կը տպվի), 3) Պեատիգորսկից, Սարգիսովի վերաբնակիչ Ղազարոս Տէր-Խաչատրեանից—50 ր., 4) Իւրիէվկի զավոդից, Ա. Գէորգեանի միջոցով տեղում հանգանակված 115 ր. 10 կ. գումարի կէսը —57 ր. 55 կ., 5) Թերմեզից, Խ. Ցովհաննիսեանից—47 ր. 37 կ., 6) Նոր-Բուխարայից, Ա. Շահնազարեանի միջոցով տեղական գաղութից հանգանակված 50 ր. (ցուցակը կը տպվի), գումարն է 242 ր. 72 կ.։ Նախորդ ստացված 45,423 ր. 90 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 167) ստացել ենք ընդամենը 45,666 ր. 62 կոպէկ։

ՑՈԳՈՒՏ ՀԱՑԿԱԿԱՆ ԴԱՏԻ

(Նուպար-փաշայի նախագահ. գործ. յանձ.)

Ստացանք՝ 1) Հին-Ղրիմից, Ցովհաննէս Խաչատրեանից, 16 ր., 2) Գուլուբկոյէից, Լ. Պարսեհանից, 5 ր., ընդամենը 21 ր.։ Նախկին ստացված 391 ր. 01 կ., գումարի հետ (տես «Մշակ» № 164) ունենք ընդամենը 412 ր. 01 կ.։

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Արշակ Ղուլեանից 5 ր. ամսական տալու պայմանով մինչև ճաշարանի փակումը։

Ստացանք հանգուցեալ Վարվառէ Ց. Առաքելեանի զաւակներից 100 ր. հանգուցեալի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն գումարը՝ դրանով վաղը փախստականներին ճաշ տալու։

Ստացանք օրիորդ Թագուհի Գասպարեանից 20 ռուբլի։

ԵՍ ԴԵՌ ՑՈՑՍ ՈՒՆԵՄ

Պարզախօսութիւնը ճշմարտութիւնը յարգողների առաջին յատկանիշն է։ Այն մարդը, որ բարոյական տարրական քաջութիւն չունի իր զգացածն ու մտածածը արտայայտելու առանց ծամածռութիւնների, առանց մութ, անհասկանալի կամ երկիմաստ խօսքերի, առանց սարկական երկչոտութեան, այդ տեսակ մի մարդ բնաւ չի կարող նախ սիրվել ճշմարտութիւն կոչված ատուածային առաքինութիւնից, ապա գործել օրէք ազդեցութիւն հասարակական մտքերի վրա։

Ի՞նչ է բարոյական յանցաւորը, եթէ ոչ ճշմարտութիւնից սարսափող և ամաչող մէկը։ Եւ ահա փորձեցէք նայել այդ յանցաւորի երեսին ուղիղ և շիտակ հայեացքով, և նա աչքերը խոնարհեցնելով գետնին՝ կը սկսէ կարմրել, երերվել, շփոթվել և արտասանել անհասկանալի դարձուածներ, որոնք կարտայայտեն նրա մտքի խեղճութիւնը և զգացումների սարկութիւնը միասին։

Ցանցաւոր են բոլոր այն հասարակական գործիչները, լինեն նրանք գործի մարդ թէ գրչի մարդ, որոնք երբ լսում են մի դառն ճշմարտութիւն, չեն կարողանում ոչ համարձակորէն հերքել նրան, եթէ ճշմարտութիւն չեն համարում, և ոչ լիովին ընդունել, եթէ ճշմարտութիւն են համարում։

Երբ ես սկսեցի յարձակվել հայ միլիոնատէրերի վրա, կարծում էի, որ չի գտնվի մի հատիկ օրինաւոր մարդ, որ չընդունէ իմ յարձակման օրինաւորութիւնը։ Թւում էր ինձ, որ ես կրկնում եմ մի շատ պարզ, շատ տարրական ճշմարտութիւն, որ կարող է ունենալ միայն և միմիայն կողմնակիցներ և ոչ մի հակառակորդ։

Իրօք ես շատ էլ չը սխալվեցի։ Հասարակութեան լաւագոյն շրջաններից ես ստացայ խորին հաւանութիւն, նաև խրախուսանք։ Ասացին մինչև անգամ, որ իմ գործածած լեզուն այնքան էլ խիստ չէ և ես դեռ շատ ներողամիտ եմ դէպի կատարվող եղեռնագործութիւնը։ Եւ ես մի անգամ ևս համոզվեցի, որ հայ հասարակութեան մէջ դեռ վառ է պատասխանութեան և ազգային հպարտութեան զգացումը։

Սակայն... դարձեալ սակայն։ Իմ հրաճառանքը լիակատար չեղաւ։ Գանվեցին մարդիկ, որոնք կասկածի ենթարկեցին իմ անկեղծութիւնը։ Ոչ այն պատճառով, որ նրանք իրօք կասկածում էին իմ անկեղծութիւնը, ոչ, այդ մարդիկ շատ լաւ գիտեն, որ ես չէի կարող ունենալ օրէք անձնական շարժառիթ մի ամբողջ դասակարգի թշնամութիւն իմ դէմ գրգռելու, այլ որովհետև նրանց համար ձեռնտու էր ճշմարտութիւնը նսեմացնել։ Ձեռնտու էր, որովհետև դա պիտի ծառայէր նրանց անձնական ողորմելի շահերին։ Ջէ որ աշխարհի երեսին կան փոխառութիւն, պարտաւորակ, պաշտօնավարութիւն, ծառայութիւն և աղայութիւն, վերջապէս, հաշտասիրութիւն։

Այո, մեծ է ասկու օյժը, բայց, բարեբաղդաբար, նա ամենազօր չէ։

Ամենազօրը ճշմարտութիւնն է, որի առեղ ձայնը չեն կարող խլացնել ոչ ագռաւների գրգռոցները և ոչ աղուէսների վայնասունը։

Նիւթական կախումից իրանց համար բարոյական տարկութիւն ստեղծող խեղճերին կարող են, ինչպէս կամենում են, բացատրել իմ բողոքը։ Կարող են ինչ խորիմաստ, քողարկված լուտանքներ կամենան թափել իմ գլխին։ Գոհութիւն Աստուծոյ, դրա համար կայ Հայկազեան բառարան։ Բայց իմ բողոքը նսեմացնել չեն կարող։

հայ բուրժուազիան իր հերթին աւելի է անջատվել հայրենի իրականութիւնից, աւելի է փոփոխում ազգային նկարագրի հիմքերը։ Նրա հակազգային եռանդը այնքան է առաջացել, որ հնարաւոր է դառնում ասել, թէ հայ խոշոր բուրժուազիայի հին սերունդը, այդ կապալառուների, վաշխառուների և սովդագիարների դասը, աւելի շատ առաքինութիւններ ունէր ազգային տեսակէտից, քան թէ որդի նորաթուխ, եւրոպական կրթութեան տէր, արդիւնաբերական և սեղանաւորական բուրժուազիան, անկիրթ հայերի կրթված օրդիները։ Իրաւացի կերպով այդպէս է նայում երեոյթին Հ. Առաքելեանը (տես նրա յօդուածը «Մշակում» 1913 թ. № № 285 և 286». Հին և նոր հարաւսաններ» վերնագրով)։ Պարզելով այն հանգամանքը, որ մեր նորաթուխ բուրժուազիան երես է դարձնում հայրենի մէջավայրից՝ Հ. Առաքելեանը իր յօդուածը եզրափակում է այսպէս՝ «Եւ վերջ ի վերջոյ մենք կանգնած ենք այսպիսի երեոյթի առաջ. հայը՝ բարեգործութիւն քիչ է անում, անողներն ևս հին սերունդի մարդիկ են, անուսում, յաճախ անգրագէտ մարդիկ, վաճառականներ։ Նոր սերունդի հարուստները, որոնց մեծ մասը ուսումն և կրթութիւն են ստացել, բարեգործութեան կողմից աւելի սառ աստիճանի վրա են կանգնած»։ Այստեղ խօսվում է բարեգործութեան մասին, և մենք պիտի ասենք, որ եթէ մեր նորագոյն բուրժուազիան խորշում է այդ դասակարգի հին սերունդի աւանդական ազգային գործունէութիւնից, որը կայանում էր գլխաւորապէս բարեգործութեան մէջ, ապա նշանակում է, որ նա ընդհանրապէս չի մասնակցում և մնացած ազգային գործերին։ Ինքներն բնորոշ է, որ մեր բուրժուազիայի հին սերունդը իր կապերը չէր խզում ազգից, իսկ դա անում է նոր սերունդը։ Այժմ ջանանք բացատրելու, թէ ինչու է դա այդպէս, որ հայ խոշոր բուրժուազիան ընդհանրապէս տերտ կապեր չի պահպանում ազգի մարմնի հետ, իսկ մեր օրերի բուրժուազիան անդամ անգիտանում է ազգի գոյութիւնը։

Բ ա գ ա ւ Դ. Անանուն

*) Տես «Մշակ» № 178.

Ես ասել եմ և կրկնում եմ. հայ միլիոնատէրերն իրանց մարդկային պարտքը ազգի վերաբերմամբ չեն կատարել։ Նրանք պարտաւոր են կատարել և եթե դեռ յոյս ունեմ, որ կը կատարեն։

Կը գայ մի օր, որ նրանք, վերջապէս կը հասկանան, որ իրանց իսկական թշնամիները իրանց շրջապատող ստրուկներն ու շողոքորթներն են, որ բռնում են նրանց ձեռքը բարեգործութեան ասպարէզում, այլ ոչ թէ նրանք, որոնք ամենայն անկեղծութեամբ յիշեցնում են նրանց իրանց բարոյական պարտականութիւնը և զգուշացնում ապագայի անախորժութիւններից...

Շերվանզադէ

ԹՌՈՒՑԻԿ ԽՈՀԵՐ

—

«Հայաստանն առանց հայերի...»

. . . . . .

Մեր ջղերը, մեր գիտակցութիւնը, մեր հոգին և երևակայութիւնն այնքան բթացել են, այնքան անզգայացել, կարկամել են, որ այլևս ոչ զգում, ոչ գիտակցում և ոչ շանթահար, կայծակնահար ենք լինում...

Ամբողջ նահանգների բնակիչները սրախողխող արված... բոլոր տղամարդիկ օչխարի նման սպանդանոց քաշված և մորթոտված... հարիւր հազարաւոր փախստականներ՝ բացառապէս պառաւ կանանցից և երեխաներից բաղկացած...

Մի ժամանակ, երբ Թիւրքիայում բարձրացել էր յեղափոխութեան փրկարար դրօշը ընդդէմ Թիւրք բռնակալութեան, հայ բուրժուազիան գրօշ չէր տալիս։

. . . . . .

Ի՞նչ պէտք է պատասխանի նա այժմ... Իր աչքի առջև մեռնում, կոտորվում են մէծեղների նման հազարաւոր մարդիկ։ Ուռնելիքներով պէտք է բանալ նրանց վշտակցութեան դռները, հրեղէն բառե՞ր պէտք է հալես նրանց սրտերի մէջ, որ ցնցվեն, կայծակահար լինեն։ Շամպանեան գինու փրփրադէզ ալիքների փոխարէն դառնութեան բաժակ պիտի խմեն նրանք... Շուայտութեան, ցոփութեան և հեշտասիրութեան վրա վատնված հարիւր հազարները, հարուստ օրիորդների և տիկինների հոլանի կրծքերը և ականջները զարդարող միլիոնների մի հարիւրերորդ մասն անգամ կը ցամաքեցնեն այդ թշուառ արարածների արտասուքները, կը յագեցնեն նրանց քաղցը և ծարաւը...

Ո՞ւր է։ Ո՞վ է արդեօք մի ռուս մօսկվացի վաճառական, որ 10 միլիոն էր նուիրում օրէք բարեգործական նպատակի, առանց անունն իսկ հրապարակ հանելու։ Ո՞վ է մի ամերիկացի Մորգանը, որ 150 միլիոն է նուիրում 20-րդ դարի ամենամեծ եղեռնագործ Վիլհելմ II կայզերի ոճիրներին վերջ տալու նպատակով...։

Երբ որ 1894—96 թուականներին ամբողջ Հայաստանը արեան ծով էր դարձել, երբ հայ ժողովուրդը յեղափոխական տարրերի հետ մենակ էր կուրծք տալիս Աբդիւլ Համիդի բաշիբոզուկներին, առանց նիւթական աջակցութիւն ստանալու հայ միլիոնատէրերից, յեղափոխական անդրանիկ կուսակցութեան ականաւոր պարագլուխներից մէկը Եւրոպայի մայրաքաղաքներից մէկում խօսքի է բռնվում հայ «միլիարդէրներից» մէկի հետ։ Դրութիւնը ծանր, կատարած, զարհուրանք...

— Դրամ է հարկաւոր, դրամ, և ժողովուրդը զինվելով առիւծ կը դառնայ Համիդի ասկէրների դէմ։

— Քանի՞ միլիոն հարկաւոր կը լինի գործին օգնելու համար,—ասում է մեր միլիոնատէրը։

— Երկու միլիոնով կարելի է Հայաստանը փրկել, ոտքի կանգնեցնել Սասունը,—լինում է պատասխանը։

— Ասացէք խնդրեմ, կարելի է Սասունի լեռների վրա զավոդներ, ֆաբրիկաներ կառուցանել,—ժպտալով և հեգնանքով հարց է տալիս հայ բարեգործը։

— Ո՛չ,—պատասխանում է յեղափոխականը, յիմար դրութեան մէջ ընկած։

— Դէհ, որ այնտեղ զավոդներ չի կարելի բաց անել, ինչ գործ ունեմ միլիոններ տալու այդ տեսակ դատարկ բաների համար։

Եւ ինչ էք կարծում, մեր առատաձեռն, գթասիրտ հայրենակիցներից քանի՞սն են, որ այդ տեսակ սկզբունքով չեն զեկավարվում...

Դոք. Ս. Տաշիր

Ո՞Վ ՊԻՏԻ ԿԵՑՆԷ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՆԵՐԿԱԾ ԳԱՀԱՎԻԺՈՒՄԸ

—

Երբ մեր ազգին արդի ճգնաժամային վիճակը գահավիժումով կորակեմ, անշուշտ չպիտի մեղադրուիմ, քանի որ նկատի կունենանք թէ՝ այն կացութեան մէջն ենք, ուրկէ թաւալգլոր ինկած են հին ու նոր անհետացող ազգերը։ Ի՞նչ տարբերութիւն կայ մեր ազգին պատմական անկման դէպքերուն և այժմէութեան միջև. հինին մէջ Սիւնեաց, Մամիկոնեանց, Ռշտունեաց կամ Արծրունեաց և այլ իրար դէմ հակառակող նախարարութիւններ կային, միևնոյն ատեն թագաւորական և հայրապետական պայքարող խմբակները. իսկ ներկայիս . . . . .

. . . . . .

Այս առթիւ թող ներուի ինձ ըսել, թէ մենք առ հասարակ շաքարահամ խօսքերը կը սիրենք լսել. սակայն ինչ օգուտ. իրականութիւնը դառն է, և շողոմ ու քաղցր խօսքերէն օգուտ չի ծնիր կարծեմ։ Օրինակ՝ արդի պետական կազմերու սկզբունքը, որով օր-աւուր վեր կը հանեն պատերազմական անցքերուն ճշգրիտ ուղղութիւնը, որպէս զի ժողովուրդը միահամուռ կերպով իր ասպետական օգնոյն ապաւէնի միմիայն և ոչ ուրիշ կողմի։ Այդ եղած է մեծ ազգերու մեծ օրենութիւնը։ Այս շրջանը կարծեմ ամենանիւ արիւնով, անշահախնդիր օգուով վարուելու շրջանն է. փորձը ցոյց տուաւ ահա, որ այլ կերպ ապրիլը՝ անյապաղ կորստի դիմել ըսել է։

Մենք առանց դատողութեան և պարապ տեղը չենք շեշտեր ընում, թէ կօրստեան անկումին մէջն ենք։ Իբրև թիւրքահայ բազմիցս մորթոտումէ ազատելէ յետոյ, տարիներով՝ Հայաստանի ամենէն մութ անկիւններէն սկսեալ ատիճանաբար ամենաբարձր նկատուած կեդրոններու մէջ ազգային, կրթական, քաղաքական, կրօնական, յարաբերական ամեն շրջանակներուն շարժմանց հանդիսատես ըլլալէն յետոյ, երբ 8 ամիսէ ի վեր տեղւոյս ազգային նոյն շրջանակներուն գործունէութեան հանդիսատես կըլլանք, էջմիածնէն ու Թիֆլիսէն սկսեալ մինչև գիւղերը, առանց ծածկելու կրնանք ըսել, թէ մեր ազգը գահավիժման մէջն է։

Ո՞վ չի գիտեր, թէ Հայաստան՝ արևելեան քաղաքականութեան այդ զսպանակի կոճակը, կիսովին ինչ ատիճան քանդուած է։ Կարծեմ մեր ճաւելուն պէտք չի մնար այդ իրողութիւնն ապացուցանելու։ Իսկ միւս մեծ մասին առթիւ պէտք է խոստովանինք, թէ իրապէս ոչինչ գիտենք, գիտցածնիս շատ աղօտ և մանուածապատ տեղեկութիւններ են. թշնամին այդ մասը հրեշային իր քաղովը ծածկած է աշխարհէն և ռուս բանակին յառաջացած տեղերը կոտորելով, վառելով կը հեռանայ։ Ատոր արդիւնքն են 9 ամիսէ ի վեր «գաղթական» զարհուրելի անուան տակ Կովկաս թափուող լալահառաչ մեր ճամբորը կարաւանները։ Դեռ պիտի գան, անարկայ եմ, այնքան պիտի գան, որքան որ պիտի յառաջանայ ռուս բանակը, որբերու և այրիներու չլատուած կարաւանները պիտի գան ու լեցնեն Կովկասահայութիւնը ողողելու ատիճան... եթէ չըսեմ սովամահ ընելու ատիճան։

Այսպիսով՝ հայութեան ամենամեծ բեկորը կոչնչանայ ահա, և միւս փոքր բեկորներուն գոյութիւնը կը սպառնայ... ու մենք իւրաքանչիւր խմբով քաղուած մեր առանձին խցիկին մէջ, կամ այն է կը վիճինք, մաս առ մաս օգնութիւն հասցնելու առթիւ, և կամ եթէ փցուն մնատի հաշիւներ ալ չընենք՝ մենք մեր քսակները խռուունկ կը պահենք, ոմանք ալ զայն պահանջելու կը ճգնինք։

Ի զուր են այս փոլոֆները, կարծեմ, քանի որ ինքնագիտակցութեան շնորհքը հալիւ ունինք, և ես ահա այդ պատճառով է, որ գանավիժում կըսեմ մեր վիճակին։

. . . . . .

Ընկերութեան մը կողմէն պաշտօնավարելով՝ վերջերս այդ տեղերը, յայտնապէս տեսայ մեզնէ օտանց ձգտումը, որ ապագայ Հայաստանի մէջ պաշտօն մը առնել էր. տեսայ յայտնի պարապ թափառողներ, որ ամսական կառնէին, մինչ ամենու կուռողներէ շատեր մերկ ու անօթի էին յաճախ։

Մենք ականատես եղանք շատ յոռի դէպքերու, որոնց լուրը նախ մեր հարևան Թիւրքերէն լսած էինք։ Մենք այստեղ ականատես եղանք, որ մեր կրօնքը և պաշտօնական ազգգլուխը եղող Հայրապետին ալ էապէս չենազանդող կայ, յօգուտ ազգային շահուն կրքերը չեն զսպուիր դեռ։

Այս դէպքերը դիտելով կըսեմ, թէ մեր ազգը կը գահավիժի։

Ի՞նչ կրնանք ընել։ Ընելիքնուս օրինակը շատ պայծառ, շատ ակներև է։

Ի՞նչ կընեն մեծ ու պզտիկ ազգերը՝ 40 տարուայ ռումբերով յղփացած աշխարհի խաղաղութիւնը վրդովող դեմն դուրեր ջախջախելու համար։ Վէճերը սեղանին վրայ թողած՝ դաշնահար կընեն զայն չորս կողմէն միացած-համաձայն։ Զօր. Ֆրէնչ կը հիանայ գերմանական զօրքին հնազանդութեան մարմնացումն ըլլալուն։ Ազգ մը կայ երկրագունդի վրայ, որ ամէն ինչ ունի և մեծնալու համար ամէն ինչ գիտէ. միայն բան մը կայ, որ չգիտեր, այն է՝ իր մեծերուն հնազանդիլ, կամ անոնց միանալ չի գիտեր. այդ ազգը մենք ենք։ Հնազանդիլ և որոշ մեր շնորհքներով միանալ իշխող ազգային փրկութեան՝ չգիտցանք։ Այժմ աշխարհի բոլոր մարդկութիւնը այդ օգիին խորունկ գիտակցութեամբ վերքաղաքակրթուիլ կուզէ, ու մենք մեր յամառութեան մէջ պիտի մնա՞նք, Աստուած իմ...։

— Է՛, մենք ուրիշ ի՞նչ կրնանք ընել...,— պիտի ըսէք։

Մենք կրնանք տեսականօրէն մեր աչքին առջև ունենալ մեր գահավիժումը, որուն պատկերն է՝ մեր հարստահարուած, խոշտանգուած եղբայրութեան կարաւանը, որուն պատկերն է՝ Եգիպտոսի և Ամերիկայի մեր փոքրիկ խմբակցութիւններուն մէջ նոյն իսկ օրում սերմանելու գէշ իդէաները։ Այդ պատկերները աչքի առնկով՝ կրնանք հայու իսկ ազնիւ արիւնով ցնցուիլ, ասպետական գիտակցութեան գալ պահանջել, որ մեր մեծ սրտերը—բանաստեղծները, կրօնաւորները, զեկավարողները— քանդեն իրենց մէջ եղած սառնեղէն սրտերը, կիրքերնին, դարաւոր զոհին զոյութեան փրկութեան։

Մենք կրնանք այդ ուղղութեամբ մի խմբակ կազմել, որ մշակէ անշահախնդիր օգնութեամբ՝ հայոց մեծերու սրտերը էապէս իրար զոդելու հարցը։ Այդ ատեն գործ և դրամ շատ կունենանք։

— Ո՞վ պիտի թամբ ըլլայ մեր գահավիժման։

— Դոնիկ կիրքերու զոհումը, որ միութիւն առաջ կը բերէ։

Գաղթական

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

—

(Հեռագրով)

Սաւրբօպոլ, 13 օգոստոսի

Ցանձնաժողովը այսօր փոխադրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին 2125 ռուբլի ի լրումն առաջվայ ուղարկվածների։

Նախագահ Ենիկոլոփեան

—

Հ. Կ. Կոմիտէն աչքի առաջ ունենալով գաղթականների ծանր կացութիւնը և նրանց շտապ օգնութիւն հասցնելը՝ խնդրեց մի շարք տիկինների, օրիորդների և քահանաների, որ արագ կերպով շրջեն քաղաքիս բոլոր թաղամասերում և հանգանակեն ինչ որ կարող են, որպէսզի հնար լինի շուտով օգնութիւն հասնել գաղթականներին։

Առաջին ժողովարարութիւնը եղաւ շատ աջող և արագ ու առաջին հերթին ուղարկվեց Էջմիածնի Եղբայրական Օգնութիւն անունով մի վագոն իրեղէն և քաղաքագլուխ Խատիսեանից պ. Խունսնցի միջոցով 3000 ր. թէյ և շաքար։

Ինտելիգենտ և խնամով օյտերի կարիքը ի նկատի ունենալով, Հ. Կ. Կոմիտէի ձեռքով կազմակերպվել է երեք խումբ, որոնցից մէկը Իգդիր, միւսը Էջմիածին և երրորդը Դիլիջան։

Առաջին խումբը բաղկացած է 6 հոգուց և կազմված Հայ Օրիորդների Կոմիտէի ներկայացուցիչներից՝ զեկավարութեամբ օր. Թումանեանի. երկրորդ խումբը, բաղկացած մի քանի ինտելիգենտ պարոններից և տիկիններից, կազմված է 15 հոգուց «Մեղու» ընկ. յանձնարարութեամբ և օր. Քափանակեանի զեկավարութեամբ. և երրորդ խումբը, որ գնալու է Դիլիջան բժ. Եազմաճեանի և բժ. Թումանեանի առաջնորդութեամբ բաղկացած է 8 հոգուց։

Առաջնորդարանում ամեն օր եռանդուն կերպով շարունակվում է իրերի, ամեն տեսակ ուտեստեղէնի և զգեստների ժողովարարութիւն, որոնք նոյն տեղը տեսակաւորվելով՝ դասաւորվում են առանձին մեշոկների մէջ և ուղարկվում են Էջմիածնի Եղբ. Կոմիտէին։

Համաձայն Էջմիածնի Կոմիտէի խնդրի՝ երեխաների համար գնվեց Հ. Կ. Կոմիտէի կողմից 1000 արշին կլիսնկա և ուղարկվեց։

Նոյնտեղ ուղարկվել է Հայ Կանանց Կոմիտէի կողմից 2 արկղ դեղօրայք և Կովկ. Դեղավաճ. Ընկ. նուիրաբերած սապոն և սոսկաներ։

Վաճառականական կոմիտէից մեծ քանակութեամբ ժողովված է մանուֆակտուրային ապրանք, որպիսին «Մեղու» ընկերութիւնը յանձն է առել կարել և ուղարկել ուր հարկն է։

Առաջնորդի դիմումի հիման վրա՝ Քաղաքային Մուսուլմանը տուել է քաղաքումս եղած գաղթականներին բաժանելու համար 400 զգեստ և 2000 ր. կանխիկ դրամ, իսկ քաղաքիս քահանաները որոշել են անձնական նուէրներով պատրաստել մօտ 400 պուդ հաց, իսկ ընդհանուր գանձարանից յատկացնել այդ նպատակի համար 2000 ր.։

Բացի դրանից մի քանի քահանաներ և Հալաբարում դիրք ունեցող վաճառականներ ձեռնարկել են իրանց շրջանում լայն ժողովարարութիւն կազմակերպել։

Առաջիկայ Աստուածածնի տօնին, այն անձինք, որոնք որոշել են մատաղներ մորթել ս. Սարգիս, Բեթղեհէմ, Կուկիայի ս. Աստուածածին, Խոջիվանքի, Կաթուղիկէի և Թէլէթի եկեղեցիներում, ցանկութիւն են յայտնել այդ մատաղները յանձնել առաջնորդարանին, որ մաս-մաս գործադրվեն գաղթականների օգտին։

Ցաւալի ժողովարարութեան է ձեռնարկվելու նաև առաջիկայ մեռելոցի օրին։

Կովկասի Գլխաւոր Կենտրոնական Կոմիտէն դիմել է փոխարքային և թոյլատրութիւն խնդրել, որ երկաթուղով ձրիապէս փոխադրեն Թիֆլիս երեխաներին, որոնց համար Թիֆլիսում պէտք է հիմնվի ապաստարան 1000 հոգու համար։ Այդ ապաստարանը որոշված է բանալ Կրծանիսում, որի համար տրամադրել են Կրծանիսի վանքի շինութիւնը, կոյս Թայիբեանի և Գ. Ցուրինեանի տները։

Գ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԸ

—

Հովասուն պարտէզի մը մէջ, կանաչախիտ ծառերու սուերներու տակ, ամիսներով տանջուած, հիւծուած և անմխիթար գաղթական եղբայրներս ցերեկները կառնեն իրենց հանգիստը։

Անոնց վիշտը, որ ամեն մը կամաքուին այդ պարտէզին մէջ։ Հոն է պ. Տիգրան Նազարեանը՝ իր օգնական տիկիններով, օրիորդներով ու գործակատարներով։

Բոլորն ալ սիրայօժար ու բարեհամբոյր երեսոյթով մը կը հիւրընկալեն գաղթականները։

Ցերեկ էր։

Հեղեհեղ ճաշի սեղանի շուրջ հաւաքուեցան քանի մը տասնեակ գաղթականներ։ Անոնց առատութեամբ, հաց, միս և մսաջուր տրուեցաւ։ Բոլորն ալ գոհ և մխիթարուած կը սկսին ճաշել։ Ճաշի ատեն հեղեհեղ նորեկները կուգան։

— Համեցէք, սիրելի հիւրեր, համեցէք ճաշի,—կը կանչէ պ. Նազարեանը, տառապեալ գաղթականներու սիրելի հիւրընկալը։

Անոնք գոհ և ուրախ այս հիւրընկալութենէն՝ սեղանի շուրջ կը շարուին կը ճաշեն, ու երբեմն ալ կը կատակեն։

— Տօ լաւ, հըլա ընտեխ իրիշկա*), ադէն լէ մեր կերած մսաջուրէն կուտէ։

Բոլորս կը նայինք և, իրաւ, ծառի մը շուրջին տակ քանի մը հոգով նստած է մեր սիրելի հիւրընկալ պ. Նազարեանը և հոգէ պնակի մը մէջ կուտէ մեր կերած մսաջուրէն և գոհ ու մխիթարուած երեսոյթով մը յաճախ մեզ կը նայի։

Եւ օրքա՞ն կուրախանանք, երբ կը տեսնենք, որ մեր «աղէն» պ. Նազարեանը մեզ հետ կը ճաշէ ու մեր կերած կերակուրէն կուտէ։

Մեր «աղէն» շատ քաղցր վերաբերմունք մը ցոյց կուտայ գաղթականներու հանդէպ։ Նա իր բացած ցերեկուայ ապաստարանի և՛ տէրն է և՛ ծառան։ Նա կաշխատի օրն ի բուն և կը հսկէ բոլոր գործերուն։

Գաղթականներու ճաշին սեղանին կը սպասարկեն քանի մը օրիորդներ, որոնք սիրայօժար և ինքնակամ եկած են հոն՝ ծառայելու իրենց տառապեալ եղբայրներուն։

Ճաշէն յետոյ ոմանք ծառերու շուքին տակ կը նստին, ոմանք կը հեռանան քաղցը տպաւորութեամբ մը, կուշտ և գոհ, իսկ առուտ ու իրիկուն նոյն հիւրընկալ պարտէզը կուգան կրկին և կը խմեն սիսիրեչ թէյը։

Եւ այս բոլորը պ. Նազարեանը կընէ, Վասպուրականի Արծուի և Երկաթէ-Պատրիարքի 2000 նկարներու վաճառման և ժողովրդի նուիրաբերութեան վրայ դնելով իր յոյսը։ Եւ իր «ապաստարանը կը մնայ բաց այնքան շաբաթ, որքան հայ գիտակցութիւնն ու պարտաճանաչութիւնը կարող կը լինեն պահպանել նրա գոյութիւնը։

Օգնեցէք, օժանդակեցէք պ. Նազարեանին, որպէս զի նա տայ աւելի շատ «ափսանք մայր-հայաստանցիներին»։

Ցաջողութիւն քեզ և քու նուիրական գործին, պ. Նազարեան։ Խնամածդ գաղթականները երբէք չպիտի մոռնան քու այդ անվախ գթասրտութիւնն և գուրգուրալից ու քաղցր վերաբերմունքը։

Հ—ուն

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՔՐ-ՀԱՑԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

—

Գրական-Գեղագիտական Սալոնի փախստականների համար օգոստոսի 9-ից բացած ճաշարանի համար ստացվել են օգոստոսի 13-ին նուէրներ՝ հ. տէր-Աբրահամ աւ. ք. Ղազազեանից 6 ր., տիկին Իւլիա Սպէնդիարեանից 12 ր., Սոֆիա Դանիէլ-Բէկից 2 ր., Schreder-ից 1 ր.։ Վ. Ա. Շ.-ից 10 ր.։ Ընդամենը 31 ր.։ Բացի այդ՝ տ. Իւլիա Սպէնդիարեանը նուէրաբերել է մի կապոց ճերմակեղէն և զգեստներ կանանց համար, որի մի մասը մեր խնդրանքը և բաժանվել է ճաշարանում ներկայ եղող մի քանի տիկիններին, օրիորդների և երեխաների։

Կան կարող, ձեռ կանայք, օրիորդներ, կարող մեքենաների վրա շատ վարժ աշխատաւորներ։

Ուսուցչութեան շատ յարմար երկու յայտնի օրիորդներ՝ բուն վանեցիներ, տարիներ առաջ ապրած և Թիֆլիսում, Ցուշանեանն դպրոցն աւարտած և ապա գիմնազիայում ու Կ. Պոլսի Էսայեան մանկավարժական կուրսերը սովորած օրիորդներ են պատշաճ պաշտօն։ Ցարմարագոյնն է բացվելիք օրբանոցում սրանց պաշտօն տալ։

Մաքրութեան համար անհրաժեշտ է, որ մանկավարներն ունենան և մաքուր ճերմակեղէն ու ամիսը գէթ երկու անգամ բաղնիս գնան։

Ճաշարանի և թէյարանի սրբիչները, ծառայողների գոգնոցները փոխվում են ամեն օր և լուացվում։

Ծառայողների կազմը (ռոճկով) հասել է 11 հոգու։ Մեր համեստափայլ օրիորդներից և տիկիններից սիրայօժար ամեն օր սպասաւորում են ճաշող փախստականներին։

Արտաքնոցները բաժանված են՝ կանանց համար առանձին և տղամարդկանց համար առանձին, և սրանց մաքրութեան վրա բացառապէս հսկում են երկու հոգի։

Լուացվելու համար տրվում է առատ սապոն։

Երէկվանից ճաշարանի թէյարանը ամբողջ օրը բաց է և ցանկացողներին եփած ջրի տեղ տրվում է թէյ, որքան կամենան։

Որովհետև ճաշողներից շատերի ընտանիքները, երեխաները յոգնած, կիսահիւանդ լինելով առ այժմ չեն կարողանում յաճախել ճաշարանը, ուստի երէկվանից բացի հաց, միս, շաքար նրանց ուղարկվելը, ուղարկվում է վերջրներով և սուպ։

Հոգ է տարվում արհեստաւոր փախստականների համար աշխատանք գտնելու. արդէն մի քանի հոգի իսկ տեղաւորվել են։

Տ. Նազարեան

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

Պետրոգրադ, 12 օգոստոսի

Նախագահում է Վարոն-Սեկրետը։

Մինիստրների օթեակումն է ֆինանսների մինիստրը։ Քննվում է պետական եկամտային տուրքի ներմուծման հարցը։

Գոսնիկովը մատանշում է քննվող հարցի մեծ նշանակութիւնը։ Այդպիսի նշանակութիւն չեն ունեցել ֆինանսների մինիստրութեան մինչև այժմ ներկայացրած օրինագծերը։ Այս օրինագիծը Պետական Դումայի յանձնաժողովներում մնացել է ամբողջ 8 տարի և այժմ հանված է այնտեղից բիւջէտային նկատումներով։ Այժմ հարկ զգացվեց դիմել կրեդիտային խոշոր գործողութիւնների, որոնք առաջ են եկել հայրենիքի պաշտպանութեան անհրաժեշտութեամբ։ Այդ պաշտպանութիւնը բարձր է ամեն բանից և նրան պէտք է զոհ բերվեն ամեն ինչ (ծափեր)։ Զեկուցանողը առաջարկում է Դումային խրախուսել օրինագիծը (ծափեր կենտրոնում և ձախում)։

Երկրորդ զեկուցող Կիրինսկին համաձայն լինելով առաջին զեկուցանողի հետ, սահմանափակվում է մի նկատողութեամբ, թէ ֆինանսական յանձնաժողովը իր բոլոր օյժերը ուղղել է այն բանին, որպէս զի նը-պաստէ տուրքի ապագայ վճարողներին պահանջի քմահաճոյքներից։

Իշխ. Սվեատոպոլկ-Միրսկին, ցանկանալով կանգ առնել գլխաւորապէս այն հարցի վրա, թէ այդ տուրքը ինչպէս կանդրադառնայ մեր գիւղում, նախ և առաջ նկատում է, որ եկամտային տուրքը, ինչպէս և իւրաքանչիւր վերացական կառուցուածքներ, միշտ մեր մտաւորականութեան երևակայութիւնն են գերել։ Մանրամասն կանգ առնելով եկամտային տուրքի արևմտեան պրակտիկայի օրինակի վրա, իշխանը գալիս է այն եզրակացութեան, որ ինչ կողմից էլ որ մօտենալու լինենք եկամտային հարկատուութեան, պարզ է լինում, որ նա մեզ անցանկալի է։ Ճառախօսը առաջարկում է մասնաւոր հողատէրերի եկամտային հարկատուութիւնը փոխարինել պետական հարկի համապատասխան բարձրացումով։ Նա կշէ անում այս վերջին օրերին հանդիսաւոր թողնել ռուս կալուածատէրին, գոնէ մի անգամ նրան վերաբերվել առանց կրքի և բարեհաճ սառնութեամբ, որով միշտ վերաբերվում են գիւղացիութեան։

Սնեժկովը կողմակից է եկամտային տուրքին, բայց հակառակ է ատիճանաբար զարգացող եկամտային տուրքին։ Ճառախօսը քննում է դա՝ որպէս զուտ ֆինանսական միջոց, որ չէ շօշափում ոչ մի սկզբունք, բացի զուտ տեխնիքականից։ Իսկ զարգացող տուրքը ոչ միայն լոկ ֆինանսական միջոց է, այլ և շօշափում է քաղաքական և սոցիալական հարցերը։ Եթէ Դուման ցանկանում է բարձրացնել երկրի բարեկեցութիւնը ոչ թէ ունեցող դասակարգերի մակարդակի իջեցումով, այլ՝ ընդհակառակը՝ ցանկանում է եռանդուն կերպով աշխատել բարձրացնել աղքատ դասերի վիճակը, պէտք է չը մերժէ սոցիալական ձրդումներ մացնել եկամտային տուրքի մէջ։ Հետևօրը ցանկալի է համարում եկամտային տուրքի կիրառումը ազգաբնակութեան բոլոր տարրերի վերաբերմամբ։ Տուրքի բարձրութիւնը չը պէտք է վախեցնէ, որովհետև հերոսական ժամանակը պահանջում է հերոսական զոհաբերութիւններ։

Բուբլիկովը եկամտային տուրքը համարում է քաղաքական հարց։ Պէտք է, որպէս զի ունեցող դասակարգերը արդարանան ազգաբնակութեան առջև, որ համարում է, թէ նրանք քիչ են հարկադրված։ Ներկայ ծանր ժամանակ եկամտային տուրքի հակառակորդները չեն համաձայնվում նրա դէմ առ-

*) Այ մարդ, անդամ մը այն կողմը նայէ։

ռարկել։ Բայց նրա դէմ մաքառելուց նրանք չեն հրաժարվի։

Վելիխովը նկատում է, որ մեր ժողովուրդը թշնամու հետ յամառ մաքառման ընթացքում ներքին կեանքում ընդգծում է նոր օրէնքներ։ Այդպէս՝ պատերազմի ժամանակ ոչնչացվել է օղեվաճառքի պետական մենաշնորհը, սկիզբ է դրված պատասխանատու մինիստրութեան, յայտարարված է Լեհաստանի աւտոնոմիայի մասին։ Այժմ էլ հերթի վրա է եկամտային տուրքը, որ արդէն մտցված է ամենուրեք, բացի Թիւրքէն մտցված է ամենուրեք, բացի Թիւրքէն։ Թեւելով եկամտային տուրքի առաքիչներ։ Թեւելով եկամտային տուրքի առաքիչներ։ Թեւելով եկամտային տուրքի առաքիչներ